

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՀԱՐԻ ՊՈՏՁԻԱՅՈՒՄ

Բահարի՝ պարսկերենի մեծ վարպետի պոեզիայի առանձնահատկությունը հայրենասիրության թեմայի առկայությունն է: Բահարի պոեզիան բազմաթիվ ուսումնասիրողներից շատ քչերն են, որ չեն նկատել այս առանձնահատկությունը: Նրա լայնածավալ պոեզիայի հետևորդների տեսակետից՝ հայրենիքի ազդեցությունը նրա պոեզիայի վրա եղել է բազմակողմանի և դա նրա պոեզիայի ձևին, մեղեդայնությանը, լեզվին, ոճին և մյուս բաղադրիչներին յուրահատուկ արժեք է տվել:

<<Բահարի պոեզիան հայրենասիրության գագաթնակետն է... եթե ահարի պոեզիայի օվկիանոսից երկու կետ դուսանք, ապա նրանցից մեկը հայրենիքն է, իսկ մյուսը ազատությունը: Ազատության ամենալավ նկարագրումներին հանդիպում ենք նրա պոեզիայում, իսկ հայրենիքի մասին ամենազեղեցիկ խոսքերը նրա գրչին են պատկանում. ազատության և հայրենիքի մասին լավագույն գովասանքները պատկանում են Բահարին>>:

<<Ֆիրդուսիից հետո ոչ մի պոետ Բահարիից ավելի զեղեցիկ չի նկարագրել Իրանը>>: <<Ամենից առաջ Բահարը բանաստեղծ էր և նրա բանաստեղծական տաղանդի առաջնորդը հայրենիքի իմաստն էր >>:

<<Հայրենիքի և ազատության թեմաների հավասարությունն է ձևավորում Բահարի պոեզիան>>: <<Բահարը իր որոշ բանաստեղծություններում անդրադառնում է հայրենիքին ու նրա ճակատագրին... նրա քաղաքական պոեզիան բաղկացած է երեք կարևոր թեմաներից՝ հայրենիք, ազատություն, նորոգարություն>>:

<<Իրանի և հին Իրանի նկատմամբ ունեցած մեծ սերը երևում է նրա բոլոր գործերում... նա չէր գրում սիրո մասին, նա դյուցազներգու էր: Նրա նպատակները շատ հստակ ու ծանրակշիռ էին: Նրա պոեզիայում նկատելի է նրա կովարար հոգին>>:

<<Բահարը իր կյանքի նպատակը արվեստում տեսնում ու ընդունում էր ամենայն քաջությամբ: Նա իր մեջ ունեցած զրական տաղանդը և իր մեջ թաքնված կրակը օգտագործում էր միմիայն իր ծննդավայրի համար>>:

<<Բահարը պարսկական լիրիկական պոեմի սիրահարին փոխարինում է հայրենիքով: Նա անգամ սիրային բանաստեղծություններում քաղաքական լեզու ունի>>:

<<Երբ Բահարը խոսում է իր հայրենիքի գեղեցկության մասին, այդտեղ մենք հանդիպում ենք բանաստեղծական հրճվանքի: Նրան կարելի է համարել իրանի բնությունը ամենալավը նկարագրած բանաստեղծը>>:

<<Սուր աչքով բանաստեղծ ինչպիսին Բահարն է, քաղաքական պատերազմների դաշտ ներքաշվելով, իր գրիչը օգտագործեց իր հայրենիքում իր հայրենակիցների կյանքի բարեկաման համար: Իր շատ գործերում տևտեսական անբարենպաստ վիճակը նկարագրելու համար հումորն էր օգտագործում>>:

Իր իրականությունը կերտելիս՝ Բահարը իր հետնորդների համար եղել է առաջնորդ և ընթերցողներից առաջ հենց ինքն է նկատել, որ հայրենիքն է իշխում իր մտքին և լեզվին: Եվ պոետի վրա հայրենիքի թողած այս մեծ ազդեցությունն ավելի լավ հասկանալու համար, նրա միտքն ու լեզուն ըմբռնելու համար, նրա բանաստեղծություններում պետք է փնտրել պոետի և հայրենիքի միջև առկա զգացմունքային կապը: Բահարը առաջինը ինքն է ուսումնասիրության ենթարկել իր պոեզիան: Եվ շատ ժամանակ իր պոեզիայի նկատմամբ ուսումնասիրողի դերում՝ նա իր պոեզիան անվանել է հայրենական և կենսագրության մեջ իր անվան կողքին շեշտել է հայրենասեր բառը: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ Բահարը միաժամանակ եղել է թագավոր և ծառա: Իր ներաշխարհում նա մի կողմից խոսքի թագավոր էր, իսկ մյուս կողմից հայրենիքի և իր ժողովրդի ծառան:

*Ես վաղուց հայրենիքիս ծառան եմ*

*Ազգիս խոսքի թագավորն եմ...*

Սակայն հայրենիքի մասին այսպես խոսելն ու բանաստեղծելը հավանաբար սկիզբ է առնում յուրահատուկ մտածելակերպից և այդ ամենը հասկանալու համար պետք է խորանալ այդ մտածելակերպի մեջ: Կարելի է ասել, որ այս հայրենասեր պոետը ունի մեծ փորձ հայրենիքի հետ հոգևոր կապ ստեղծելու հարցում: Այս կապի միջոցով նա իր պոեզիայում կյանք է տալիս հայրենիքին և նրա հետ զրույցի բռնվելով՝ նրա ցավակիցն էր դառնում, տեսնում է նրա արցունքները, տխրությունները և ուրախությունները, լսում է նրա գաղտնիքները, պատմությունները: Եվ դա է պատճառը, որ ինքն իրեն <<հայրենիքի լեզուն>> էր անվանում:

*Ես հայրենիքիս լեզուն եմ*

*Վստահ զիտեմ լեզվով է միայն Իրանի միաբանությունը*

*Այն ինչ կասեմ իրանի սրտի գաղտնիքն է*

*Թող այս գաղտնիքը մտնի բոլորի սրտերը...*

Միգուցե ճանաչելու համար Բահարի և հայրենիքի միջև եղած կապը համեմատենք Վանզոգի և բնության միջև եղած կապի հետ: Այնպես ինչպես այս մեծ գեղանկարիչը՝ լսելով բնության ճիչը, զույներով նրան տեսք էր

հաղորդում. այնպես էլ Բահարը, հայրենիքին կյանք տալով, լսում էր նրա խոսքերը ու պոեզիայի վերածում: Երբ հայրենիքը խրատում է իր գավակներին, Բահարի խոսքն էլ խրատի է վերածվում և իր ստեղծագործությունը կոչում է <<Պատգամ իրանիին>>:

*Զգոն եղիր Իրանը քեզ պատգամ է տալիս,  
Քեզ հարյուրավոր հարգանքով ու փառքով է տալիս,  
Արշալույսի մեղմ գեփյունն է ողջունում,  
Որը անցնում է նախնիների անարատ հողից:*

Որոշ ժամանակ Բահարի և հայրենիքի գոյությունն ու կյանքը այնքան են միախառնվում, որ հայրենիքի բաղադրիչները՝ հողն ու երկինքը ստանում են պոետի զգացմունքների գույնը:

*Երբ արյունոտ ու թախծոտ աչքես եմ բացում,  
Որը իմ հառաչանքներից ծածկված է վարդագույն կամարով  
Երկինքը իր հազարավոր գիշերային աչքերով  
Իր պատգամով ու մտքով  
Մինչև արշալույս արթուն է մնում:*

Չնայած, որ հետաքրքիր կապը հայրենքի ու Բահարի միջև բազմաթիվ բանաստեղծական մտքեր են պոետին սովել, միաժամանակ վերքերի ու տանջանքների պատճառ էլ են դարձել, քանի որ զգում էր հայրենիքի սրտի տրոփյունը, ուստի հայրենիքին հասցված վերքերն էլ իր մաշկի վրա էր զգում:

*Իմ ազգ, իմ հայրենիք,  
Որ քո սիրուց դարձել եմ խելագար...*

Այս զգացմունքային և խորը կապի ծանրությունը Բահարի լեզվի և մտածողության վրա թողել են մեծ ազդեցություն և դրա դրսևորումները տեսնում ենք նրա թողած ժառանգության մեջ: Նրա պոեզիայում լինում են պահեր, որ եւ հոգնած վերքերից, ինքն իրեն է դիմում.

*Դուրս եկեք իմ սրտից միշտ ու թախիծ...*

Եվ երբ խրատներից օգուտ չկար, պոետն իրեն մատնում էր Գինարուքի, ամեն ինչ մոռանալու համար: Նա գինու մեջ խեղդելով իր ցավերը ուզում էր մոռանալ հայրենիքի մասին, որ այլևս չհասի <<հայրենիք դու ես իմ օրրանը>>, քանի որ այլևս չի ուզում տեսնել իր հայրենիքի գերությունը, վերքերն ու թախիծը:

*Արի ընկեր, լցրու ինքնամոռացության գավաթը  
Լցրու գավաթը, որովհետև կուշտ եմ գիտակցությունից  
Այս գիտակցությունը իմ կապանքն ու թակարդն է,  
Որը դառն է ինչպես թույնը:*

Սակայն, չնայած այն բոլոր գրկանքներին, որ Բահարը կրել էր հայրենիքի հետ ունեցած խորը կապի պատճառով, ոչ մի բան չէր կարող կոտրել ու ոչնչացնել այդ կապը, որ պոետի հետ էր իր գգացմունքների ձևավորման օրվանից մինչև մահը, և նա վարկյան անգամ չմոռացավ դրա մասին:

Բահարի պոեզիայի մեծ կետը, ինչպես ասում էր <<Շաֆիի Քաղքանին>>, մինչ այսօր ուսումնասիրության չի ենթարկվել: Հնարավոր է, որ ամենամեծ դժվարությունը Բահարի պոեզիայում հայրենիքի իրական դեմքը գտնելն է: Փաստելու համար հայրենիքի թեմայի բազմակողմանիությունը Բահարի պոեզիայում, կարելի է հեեց իր իսկ ստեղծագործություններից օրինակներ նշել: Բահարը իր պոեզիայում հայրենիքը ներկայացնում է որպես <<ծաղկած այգի>>, <<գուլալ աղբյուր>>, <<Շայգանի գանձը>>, <<Խոսրովի գանձը>>, <<Քյումարսի կալվածքը>>, <<Հարուստ երկիր>>, <<Հումայունի կալվածքը>>, <<Առյուծների բույնը>>, <<Բուերի բույնը>>, <<Տանջված դեղին կակաչ>>, <<Մայրական հոգևած սիրտ>>, <<Մեղյալների երկիր>> և այլն: Հայրենիքի դեմքի փոփոխության հետ մեկտեղ, փոփոխության է ենթարկվում նաև Բահարի բանաստեղծական լեզուն: Հայրենիքի մասին գովասանքներում լսվում է կրա պարծենկոտ ձայնը, ապա լսում ենք նրա ցավով ու ափսոսանքով լի ձայնը, ձայն, որը ընթերցողին տանում է մինչև Բահարի հուսահատության աշխարհ:

*Հեռանալ է պետք հայրենիքից*

*Կամ պայքարել է պետք*

*Ուր կորավ արդարության խոստումը...*

Պոետին ոգեշնչողը որ Խուրասանն է, որտեղ ծնվել ու հասակ է առել, այն Խուրասանը որի սահմանները ձգվում էին մինչև Սամարղանդ և Հարաբ: Այն Խուրասանը, որը ծնել էր պարսկերեն խոսքի պահպաններ Ֆիրդուսին, Ռուդաֆին և այլ պոետների: Այն Խուրասանը, որը քաջության և խիզախության օրրանն էր և ծնունդ էր տվել հազարավոր քաջարի մարդկանց, որոնք ինչպես մի ալեկոծ ծով դիմադրել էին օտարների հարձակումներին: Հայրենիքի իմաստը որպես երկիր ուսումնասիրելիս նորից կանգ կառնենք նույն հարցերի առջև: Այստեղ էլ հայրենիքը որպես երկիր, հյուսվում է պատմության հետ: Պարսկական պատմության որ հատվածն է ավելի շատ ազդում Բահարի բանաստեղծական ներաշխարհի վրա: Փիշդասների ու Քիյանյանների ժամանակաշրջանը իր սահմաններով ու պատմական հերոսներով, թե Աքեմենյանների հզոր շրջանը, թե Աշկանյանների շրջանը և թե Մասանյանները, որոնց օրոք, ըստ Բահարի, արձանագրվել է քաղաքական հզոր ու մեծ առաջընթաց: Եվ դրանից հետո այն Իրանը, որը ոտքի կանգնեց ու վերամիավորվեց ու վերածվեց նախկին հզոր ու միասնական պետությանը:

Բահարի պոեզիայի տեսական կողմը ճանաչելը ճանապարհ է հարթում նրա բանաստեղծական կողմը ճանաչելու համար: Ուսումնասիրողի գործը տեսական և բանաստեղծական կողմի մեջ եղած կապը պարզելն է: Պոեզիայի բաղադրիչները՝ լեզուն, ոճը, եղանակը ու երևակայական տեսարանները ինչքանով են արդյոք կապված պոեզիայի տեսական կողմի հետ: Արդյոք մանկության օրերի խուրասանի մասին գրելիս Բահարը նույն բանաստեղծական լեզուն է օգտագործում ինչ մեծ խուրասանի մասին գրելիս: Տարբեր քաղաքական դեպքեր նկարագրելը ինչպիսի ազդեցություն են թողնում ընթերցողի վրա: Մենք այն ժամանակ կարող ենք հասկանալ Բահարի պոեզիայի եղանակը, լեզուն, և բառերի արժեքը, էրբ գտնենք նրա պոեզիայի ակունքներն ու հիմքերը:

### *Օգտագործված աղբյուրները*

1. Սուհամմադեգա Շաֆիի Քաղաքնի, այբուբեն 3-րդ տարի, հ. 2. էջ 22 և նաև պարսկերեն պոեզիան սկսած հեղափոխական շրջանից մինչև թագադրության ավարտը, Թեհրան, Թուս, 1359, էջ 37 և 38:
2. Ջավալ Մաթինի, Բահար և Իրան, Իրաննամե, 5-րդ տարվա գալթնան հատուկ համար, 4 1366-ի ամառ, էջ 562
3. MICHEL LORAIN, BAHAR. LIFE AND WORK, ENCYCLOPAEDIA IRANICA, LONDON, AND NEWYORK 1989, VOL III, P 479
4. Սուհամմադալի Սեփանլու, Բահարի վերջին հրավառությունը, ազատության չորս պոետներ, Շվեդիա Աֆսանե հրատարակչություն 1372/1994 էջ 360:
5. Հեջաթոլլահ Ասի, Բահարի ընտրված ու վերլուծված ստեղծագործությունները, Թեհրան, Ֆարգան 1374, էջ 12:
6. Աբդուկիռուսեյ Ջադիսքուր, Բահար՝ ազատության ջաղագով, Թեհրան 1343, էջ 309-324:
7. Լ.Ս. Պիսկով, Մալոբուլչուարա Բահար, Իրանի ամենամեծ քաղաքական պոետ, նոր պատգամ, 4-րդ տարի Աբան ամիս հ. 2-րդ, 1340, էջ 1-8:
8. KUBICKOVA, Verra, Persian Literature of The 20th Century, in History of Iranians Literature Holland University of leyden, D.Reild Publishing Company Dordrecht, 1968, p 372-373
9. MACHALSKI, Franciszek, BAHAR as a painter of nature, Calcuta, Iran Society Silver Jubilee Souvenir 1970, p 233- 37
10. Հեշմաթ Մովինդ, հումորը և կատակը Բահարի պոեզիայում, Իրաննամե հատկացված Բահարին, 5-րդ տարի, հ. 4, 1366-ի ամառ էջ 598:
11. Հայրենիքը վտանգված է, 1298 Շամսի, դիվան էջ 197:
12. Մասնավի, դիվան 2-րդ հատոր, էջ 829:
13. Բաքվի նվերը դասիդեն, դիվան 1-ին հատոր, էջ 774:
14. Իրանի պատգամը դասիդեն, դիվան 1-ին հատոր, էջ 569:
15. Մղձավանջում դասիդեն, դիվան 1-ին հատոր, էջ 577:
16. Ղազալ, չավարտված, դիվան 2-րդ հատոր, էջ 1232:
17. Իմ հայրենիք, դասիդեն, դիվան, էջ 208:
18. Հոգու հրճվանք, դասիդեն, դիվան, էջ 374:
19. Սաղինամեից, դիվան 2-րդ հատոր, էջ 1059:
20. Մաշրուֆե հեղափոխության պատմությունը, դիվան, էջ 759: